

Արձանագրություն 10

2014 թ. նոյեմբերի 13-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ռ. Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ. Ասոյանի:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 27-ը:

Օրակարգ՝

1. Համաձայնագրի կնքում Գավառի պետական համալսարանի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև:

2. ԳՊՀ միջազգայնացման ռազմավարությունը և Եվրամիության «TEMPUS PICA-SA» ծրագրի ընթացիկ արդյունքները:

/ զեկ՝ ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյան /

3. ԳՊՀ 2013-2014 ուստարվա տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվությունը և 2014-2015 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

/ զեկ՝ պրոռեկտոր Ա.Ապրոյան /

4. Ընթացիկ հարցեր:

Նիստը բացեց ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը: Նա գիտխորհրդի անդամներին ներկայացրեց Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանին և խոսքը տվեց նրան: Գագիկ Մակարյանը նշեց, որ գործատուների հանրապետական միությունը ստեղծվել է 2007թ.-ին և ծավալել է բուռն գործունեություն: Նա հանգամանորեն ներկայացրեց միության ստեղծման նախադրյալները, կառուցվածքը, գործունեության ուղղությունները: Միության համար թիրախային են համարվում զբաղվածության ապահովման հիմնահարցերը՝ կապված երիտասարդների ու կանանց աշխատանքի, փոքր բիզնեսի կայացման հետ, և ՀՀ-ից արտադրանքի արտահանման հարցերը: Կազմակերպության խնդիրներից են Գեղարքունիքի մարզում մարզային կառույցի ստեղծումը, համագործակցությունը կրթական միջավայրի հետ, միգրացիայի և թրաֆիքինգի հետ կապված հարցերը, համագործակցությունը միջազգային կառույցների հետ, ակտիվ մասնակցությունը օրենսդրական նախաձեռնություններին և այլն:

Գ. Մակարյանի ելույթից հետո կնքվեց համագործակցության համաձայնագիր Գավառի պետական համալսարանի և Հայաստանի գործատուների հանրա-պետական միության միջև:

ԳՊՀ միջազգայնացման ռազմավարության և ԵՎրամիության «TEMPUS PICASA» ծրագրի ընթացիկ արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը: Ձեկուցողը նախ անդրադարձավ բուհի միջազգայնացման անհրաժեշտության հիմնախնդրին, այնուհետև հանգամանորեն անդրադարձավ այն հարցերին, որոնք արժարժվում են նշված ծրագրում. ա/ կրթական համակարգի զարգացում և միջազգայնացման խրախուսում բովանդակային, կառուցվածքային, կառավարչական, մշակութային առումներով, բ/ նպատակների որոշարկում: Անդրադարձ կատարվեց միջազգայնացման նպատակով բուհերին առաջադրվող արդի պահանջներին, այդ գործընթացի իրականացման շրջանակներին, փուլերին, ցուցանիշներին, ծրագրերին, ուղիներին և բուհերի միջազգայնացման ռազմավարությանը: Ռ. Հակոբյանը ներկայացրեց նաև այն միջազգային ծրագրերը, որոնց մասնակցում է Գավառի պետական համալսարանը:

Օրակարգի 3-րդ հարցի մասին զեկուցեց ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր Ա. Ապրոյանը: Նա ներկայացրեց ուստարվա ընթացքում ԳՊՀ-ում կատարված տնտեսական աշխատանքները, որոնք ընդգրկել են ինչպես շինարարական-վերանորոգման, այնպես էլ գրասենյակային նյութերի, տեխնիկական միջոցների ու սարքավորումների, համակարգչային տեխնիկայի ձեռքբերման աշխատանք-ները: Նշվեց, որ ԳՊՀ տնտեսական գործունեությունը նպատակ ունի բարելավելու կրթական ծրագրերի իրականացման նյութական պայմանները, որին միտված է նաև նոր ուստարվա զարգացման հայեցակարգը:

Նիստի վերջում ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը և ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուսուկյանը ներկայացրին այն հարցերը, որոնք կապված են ընթացիկ ուսումնական գործընթացի և ըստ ֆակուլտետների բաժինների՝ ուսման վարձի չափի փոփոխությունների հետ: Առաջարկվեց վերանայել ուսման վարձի չափերն ըստ առանձին բաժինների:

Հիմք ընդունելով զեկուցումները, ելույթներն ու առաջարկությունները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1. Հավանություն տալ Գավառի պետական համալսարանի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև կնքված համաձայնագրին:

2. ԳՊՀ միջազգայնացման մասին բուհի ռեկտոր Ռ. Հակոբյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

3. ԳՊՀ պրոռեկտոր Ա. Ապրոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4. Հաստատել ուսման վարձի նոր չափերն ըստ ֆակուլտետների առանձին բաժինների:

Գիտիտրիդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ. Ասոյան